ճամբորդէ Ս. Էջմիածին։ Կը վարէ Ս. Յակոբայ վանքին դպրապետութիւնը և Ժառ. Վարժ.ի երաժշտութեան ուսուցչութիւնը (1860-64). Կը վախճանի 1903 ին Պոլիս։ Տեսնել իր լիակատար կենսագրութիւնը (Սուրհանդակ, 1903. Թ. 1416—17)։

ԿԱՐԱՊԵՏ ՊԵ. ԳԱՆՁԱԿԵՑԻ (ԱՐՁԱԽ).— Աշկ. Խորենացի Թէոդորոս պտրք.ի. 1734 ին հայրենիքէն կը հասնի Ս. Յակոբ և կը միաբանակցի. Ձռ. 1737 Շղթայակիր Գրիգոր պտրք.էն. Կնիքը 1737. Նե. Ատանայի, Ակնայ, Ռումելիի և Եւդոկիոյ (1759-1761). Ժամանակ մը կը վարէ Փկե. պաշտօնը. 1761 ին կ'ընտրուի պտրք։ Յոպպէի եւ Ռեմլէի վանքերուն, նոյնպէս Ս. Յարութեան և Ս. Յակոբայ տաճարներուն և Բերիոյ Հոգեւան նորոգութիւնները կատարել կուտայ (1762-65) (ՄՁ. Թ. 14)։ Գանձակեցի պտրք. 1767 ին երկրորդ անգամ տպագրել տուած է Հաննէ վրդ.ի Երուսաղիմայ Պատմութիւնը, եւ նոյն տպագրութեան վերջը զետեղած է իր մի քանի կրօնական քերթուածները, որոց չատերուն սկզբնատառերը կը կապեն իր անունը։ Վախճանած է 1768 ին. Կարապետ պտրք. իր աբեղայութեան՝ Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է Մեկն. Սահմանաց գիրքը, ՌՃՁԻ (= 1738) թուին իբր յիշատակ Ս. Յակոբի վանքին (ՄՁ. Թ. 804)։ Իր տապանագիրն է հետեւեալը.

«Այս է տապան հանգստեան.
Գանձակեցի Սրբազան
Կարապետ Պատրիարքի
Սրբոյ Աթոռոյս երուսաղէմի.
Որ փոխեցաւ յանանց կեանս
Ի թվին ՌՄԺԷ (= 1768).
Որք հանգիպիք տուք զողորմի»։

ԿԱՐԱՊԵՏ ՊԵ.— Սովորական ցուցակներու մէջ կը պակսի իր անունը. սակայն յիշատակուած է 1349 թուականաւ կալուածագրի մը մէջ։ (Ընդ. Օր. 1909. էջ 291)։

ԿԱՐԱՊԵՏ ՊԿ. ՊԱՂԱՏՅԻ.—Մբ. Ծ. 1783 ին. աշկ. Էտիրնէցի Պօղոս պտրք.ի. Նե. Վանայ. Առ. Ամասիոյ-Մարսուանի. Պկ. (1823-31). Կը վախճանի 1850ին և կը թաղուի Սկիւտարի գերեզմանատունը։ Յօրինած է Լայstեr հոգւոյ խորագրով երկասիրութիւն մը (տպ. 1826, Պոլիս)։